



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Bishop Corkom Manougian, Primate

Թիւ 17017

Փետրուար 28, 1967

Արժանաշնորհ
Տ. Միքայէլ Բհնյ. Պաթեթ
Հոգեւոր Հովիւ Ս. Յարութիւն Եկեղեցւոյ
եւ Նախագահ Միական Խորհուրդի
Նիւ Պրիթըն.

Սիրելի Տէր Միքայէլ.

Ստացած ենք 1967 Փետրուար 10 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Յունուար 29ին գումարուած Ձեր Միական ժողովին մէջ կատարուած է Միական Խորհուրդի շրջանակներէն անդամաց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը. կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Միական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Այս առիթով կը յայտնենք թէ կարգ մը համայնքներ մեզին չեն հետեւած Թեմական Կանոնադրութեան յօդուածներուն, եւ պակասաւոր տեղեկութիւններ դրկած են Առաջնորդարան: Ուստի, այժմէն կ'ազդարարենք որ յառաջիկային կարեւորութեամբ նկատի պիտի առնենք գործադրութիւնը Կանոնադրութեան տրամադրութեանց:

Հանցէք փութով Առաջնորդարան դրկել նորընտիր Դիւանի անդամաց անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյն եւ ի հոգեբոյր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Տիարք՝ Տանըլտ Բոլ
Էտ Աիմոնեան
Փիթըր Պաղտիկեան Կրտսեր
Յարլզ Վարդանեան